

մէջ նեցուկ մը կորսնցնելու չարաղէտ դէպքն՝
 կրնայ մտածուիլ, թէ ինչպիսի՞ ցաւ կրնար աղ-
 գել թէ իւր մերձաւորաց եւ թէ բոլոր ծանօթից .
 եւ սակայն այն տրտմախառն ժամը կը մօտենար :
 Յանկարծ օր մը կաթուածահար անկողին կ'իյ-
 նայ Միքայէլ, եւ ամենաքաջ բժշկաց ճարտար
 ձեռքն ալ չի կրնար զինքը մահուան ճիրաննե-
 րէն ճողոպրել : Միքայէլ գրեթէ 60 տարեկան
 կնքեց իւր արդիւնալից կեանքը 1783, Օգոստոս
 13ին : Իրեն յաջորդ թողուց զաւակաց խումբ
 մը, որք էին Յովհաննէս, Անտոն, Վառվառ,
 Վարդուհի, Գորոթէա, Մարիամ. (թող իւր ե-
 րեք զաւակներն ալ, որ իրմէ յառաջ վախճա-
 նած էին.) բաց ասկէ՝ տեսաւ իւր վեց թոռները :
 Ուստի եւ իւր մահուան ժամուն՝ Տիւղեանց գոր-
 ծը պիտի ըլլար Վէհ. Սուլթանին՝ Միքայէլի
 զաւակներէն մին յաջորդ առաջարկել, եւ գտան
 զՅովհաննէս՝ Միքայէլի անդրանիկն, որ մեր պատ-
 մութեան դիւցազներէն պիտի ըլլայ :